

յելչութեան դրախտին⁴, ընդ աստուածական⁵ փեսային ի բազմաժողովս արդարոցն, ի բազմականս⁶ Աբրահամու անպակաս ուրախութեանցն լինել ժառանգորդ⁷: 22 Որպէս⁸ եւ Տէրն⁹ յԱւետարանի անդ ասաց, եթէ *Որ թողցէ զբնակութիւնս*¹⁰ իւր վասն անուան իմոյ՝ ի միւսանգամ գալստեան իմում¹¹ զկէանս¹² յաւիտենականս¹³ 14 ժառանգեցուցից նմա¹⁴: 23 15 Իբրեւ ոչ ի ժամանակեան¹⁶ մահուանէս¹⁷ փախուցեալք, այլ 18 յանհնարին մոլեկան¹⁹ անաւրէն ցանկութեանցն ճողպրեալք: 24 Իբրեւ²⁰ 21 ոչ զի զմարմինս իւրեանց ի տանջանաց երկրակոխաց ի զրպարտութենէս²² ապրեցուցեն, այլ զի զոգիսն²³ իւրեանց սրբութեամբ առանց աղտեղութեան պահել մարթասցեն²⁴ յանաւրէն 25 զհնութեան պղծութեան աղտեղութեան²⁶ խառնից մարդկան անաւրէն կրաւնից²⁷: 28 այլ զի զանձինս իւրեանց 1 բանդից եւ կապանաց եւ պատժոց, 2 մա-

1 ԱԲՂԶ լուսաւորեալ

2 ad հանգստիս

3 եւ ընդ նորոգական

4 ad դրախտին վաւերութեանն [ad վաւերութեանն]

5 abd փեսային ընդ բազմաժողովս արդարոց [եւ արդարոցն]

6 abdԲՂԶ ի բազմականսն / Ա բազմականսն (չիք ի)

7 ԱԲՂԶ ժառանգաւոր / եւ ժառանգորդս

8 abdԱԲԶ եւ ինքն տէրն

9 ad յաւետարանին ասաց թէ

10 adԱԲԶ զբնակութիւնս

11 adԱԲՂԶ գալստեան իմում / եւ իմոյ / տ իւրոյ, փխ. իմում

12 abd զկէանսն

13 եւ յաւիտենից

14 ժառանգեցուցանիցէ / ԱԲՂԶ ժառանգեցուցանեմ / abd ժառանգեցուցից նմա [ad եւ նմա]

ա Մատթ. ԺԹ 27-29

15 abd իբր [եւ իբրեւ] ոչ եթէ

16 եւ ի ժամանակեայ

17 եւ փախուցեալք էին, այլ

18 ԱԲԶ յանհնարին անօրէն մոլեկանի [Բ մոլեկան, Զ մոլական] ի ցանկութեանցն [Ա ցանկութեանցն]

19 ad մոլեկանական

20 ԲԲԴ իբր

21 եւ ոչ եթէ զմարմինս

22 եւ երկրակոխաց զրպարտութենէ / ad զրպարտութենէս

23 ԱԶ զհոգիս / ԲԴ զոգիս / ad զոգիս

24 Դ պահեցեն. չիք մարթասցեն

25 abdԱԲՂԶ զհնութեան պղծութեան [եւ զիջութենէ պղծութեան, ad պղծութեան զիջութենէն] աղտեղութեան խառնից [ad խառն, եւ ի խառն] մարդկօրէն [ad ի մարդկանէ անաւրէն, եւ մարդկանէ անաւրէն]

26 տ չիք աղտեղութեան

27 եւ կրաւնիցն

28 abd այլ զանձինս իւրեանց բանդից եւ կապանաց